զրս անթիւ՝ գնաց 'ի վերայ Պէնեւանդ քաղաքի. և առեալ զոսկերս առաքելոյն Բարդուղիմէոսի՝ տարաւ 'ի Հռոմ, և շինեաց եկեղեցի 'ի վերայ նորա։

Օդոս չորրորդ՝ որդի Օդոսի երրորդի՝ սկսաւ յամի Տեառն ՉԿԾ։ Սա եկեալ 'ի Հռոմ թագաւորեցաւ։ Սա կարգաւորեաց զԻտալիայ, և էանց ընդ Կալլն՝ եհաս 'ի Սաքսոնս ի հայրենիսն իւր, և անդ կեցեալ մեռաւ։

Հրիգուս երկրորդ սկսաւ յամի Տեառըն ՉՁԵ. ինքնակալեալ ամս ԻԲ. և ամիս Ե։ Եւ պարապեցաւ աթոռն կայսերական ամս ԺԲ. և այնուհետև վարի ընտրութեամբ երկոտասան Պարոնայց և Կարտինալաց։ Կոչի սա Հրիգուս առաջին. վասնզի բաղում թագաւորք եղին Հրիգուս անուն՝ բայց ոչ կայսր, այլ թագաւորք միայն ասին Հռոմայ՝ որպէս և Հրիգուսն այն՝ որ 'ի վերն զրեցաւ, և

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան